ՎԴ/8970/05/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 հունվարի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/8970/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումը,

ՊԱՐԶԵՑԻՆՔ

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Բորիս Էմինյանը 2023 թվականի նոյեմբերի 1-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2019 թվականի օգոստոսի 27-ի թիվ 489-Ա հրամանը, 2023 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ Վ-01/23 որոշումը՝ Հայցվորի վարչական բողոքը մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հունվարի 5-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 5-րդ հոդվածի 2-րդ մասին, 6-րդ հոդվածի 4-րդ մասին, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին, «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասին՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության բալետային խմբի վարիչի պաշտոնը չի ընդգրկվում ո՛չ հանրային և ո՛չ էլ այլընտրանքային ծառայության պաշտոնների շարքին: Հետևաբար, պետական ոչ առևտրային կազմակերպության բալետային խմբի վարիչի պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու հետ կապված հարցերը չեն դասվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով հանրային իրավահարաբերությունից ծագող գործերի թվին: Հետևաբար, կողմերի միջև ծագած վեճը բխում է ոչ թե հանրային, այլ քաղաքացիական իրավահարաբերություններից, որպիսի*

պայմաններում հայցվորն իրավասու է օրենքով սահմանված կարգով ու ժամկետում իրացնել դատական պաշտպանության սահմանադրական իր իրավունքը՝ ընդհանուր իրավասության դատարանի միջոցով:

(…)

Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրահանգում է, որ Բորիս Հմայակի Էմինյանի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի միջև վեճը՝ հանրային բնույթ չունենալու պայմաններում հայցադիմումի հիմնական պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, ուստի գործը ենթակա է վերահասցեագրման ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քաղաքացիական դատարան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, (…) առաջին ատյանի դատարան, իսկ սույն հայցադիմումով պատասխանողի հասցեն է՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 26-րդ հոդվածին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 263-րդ հոդվածին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) նախարարի մի քանի հրամաններից կայացված վերջին հրամանը հայցվորը վարչական կարգով*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 30-31:

բողոքարկել է, որի արդյունքում նախարարը կայացրել է վարչական բողոքը մերժելու մասին որոշում, որը որ վիճարկում է հայցվորը:

(…)

Արդյունքում, ամբողջ վերոգրյալի համադրմամբ բացահայտելով կողմերի իրավահարաբերությունների բովանդակությունը՝ ստացվում է, որ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունը քաղաքացիաիրավական և մասնավորապես՝ աշխատանքային չէ, քանի որ հայցվորը վիճարկում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ վարչական բողոքը մերժելու որոշումը, ինչպես նաև նախարարի հրամանը, որով անվավեր է ճանաչվել ՀՀ մշակույթի նախարարի մեկ այլ հրաման:

Այսինքն, հայցվորի կողմից չի ներկայացվել աշխատանքային վեճ, որը հնարավոր կլիներ քննել ընդհանուր իրավասության դատարանում, այլ հայցվորը վիճարկում է նախարարի՝ նախարարի մեկ այլ հրամանն անվավեր ճանաչելու հրամանը և այդ հրամանը վարչական կարգով բողոքարկելու արդյունքում կայացված նախարարի որոշումը: Հետևաբար, դրանցից բխող պետական մարմնի կողմից գործողությունների կամ անգործության իրավաչափությունը որոշելը, վիճարկումը, պարտավորեցումը, գործողության կատարումը կամ ձեռնպահ մնալը, պետք է քննվեն վարչական դատավարության կարգով, որպիսի պայմաններում սույն հայցը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/8970/05/23 գործն ըստ հայցի՝ Բորիս Էմինյանի ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2019 թվականի օգոստոսի 27-ի թիվ 489-Ա հրամանը, 2023 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ Վ-01/23 որոշումը՝ Հայցվորի վարչական բողոքը մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 35-38:

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը.

(…)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (…) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(…)

5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների նախագահները, (...) գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և համապատասխանաբար վարչական կամ հակակոռուպցիոն պալատների նախագահների մասնակցությամբ: Նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք: Որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

7. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝*

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը. (...)»:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:*

2. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

3. Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, հակակոռուպցիոն կոմիտեում ծառայությունը, արտաքին հետախուզության ծառայությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, պրոբացիայի ծառայությունը, հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը, էկոպարեկային ծառայությունը:

4. Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

5. Հանրային ծառայության պաշտոնն արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն, քաղաքական զսպվածություն և մասնագիտական գործունեություն պահանջող հատուկ միավոր է, որը նախատեսված է պետական ծառայության առանձին տեսակների համար նախատեսված պաշտոնների անվանացանկով կամ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով:

6. Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի համապատասխան ռեզերվում գտնվող անձը համարվում է հանրային ծառայող: (…)»:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու*

իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում»:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝*«1. Պետական կազմակերպության հիմնադիրն ունի պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:*

(…)

3. Պետական կազմակերպության հիմնադիրը սույն հոդվածի 2-րդ կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված իր լիազորությունները կարող է վերապահել լիազորված պետական մարմնին, իսկ գործադիր մարմնի նշանակման լիազորությունը՝ նաև կոլեգիալ կառավարման մարմնին»:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Լիազորված պետական մարմինն իրականացնում է պետական կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար: (…)*

2. Լիազորված պետական մարմինը՝ (…)

բ) իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները. (…)»:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛*

բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

9.1. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշխան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. *«[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական*

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեպտ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, (…)»[4]:

9.2. ՀՀ Վճռաբեկ դատարանը, *«Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի տնօրեն Արբեն Ղույյանն ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի* վարչական գործով՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ անդրադառնալով վարչական ակտի հատկանիշներին, արձանագրել է հետևյալը. *«(…) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես վարչական ակտին բնորոշող հատկանիշներ անհրաժեշտ է դիտարկել հետևյալները.*

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշումը:

վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն առաջացնում է ուղղակի իրավական հետևանքներ կամ ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, դրանով վարչական մարմինը վերջիններիս համար սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց տրամադրում է իրավունքներ կամ

ստեղծում է այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, կամ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է նրանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը»[5]:

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Ընդ որում, ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ինչպես նաև ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը: Անձի զբաղեցրած պաշտոնը համարվում է հանրային ծառայության պաշտոն, եթե այն ընդգրկված է պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոնների ցանկում, իսկ այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի տնօրեն Արբեն Ղուլյանն ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի* վարչական գործով՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ՎԴ/11082/05/20 որոշումը:

- Բորիս Էմինյանը 2023 թվականի նոյեմբերի 1-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2019 թվականի օգոստոսի 27-ի թիվ 489-Ա հրամանը, 2023 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ Վ-01/23 որոշումը՝ Հայցվորի վարչական բողոքը մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին[6],

- վերոնշյալ գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության բալետային խմբի վարիչի պաշտոնը չի ընդգրկվում ո՛չ հանրային և ո՛չ էլ այլընտրանքային ծառայության պաշտոնների շարքին: Հետևաբար, պետական ոչ առևտրային կազմակերպության բալետային խմբի վարիչի պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու հետ կապված հարցերը չեն դասվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով հանրային իրավահարաբերությունից ծագող գործերի թվին: Հետևաբար, կողմերի միջև ծագած վեճը բխում է ոչ թե հանրային, այլ քաղաքացիական իրավահարաբերություններից, որպիսի պայմաններում հայցվորն իրավասու է օրենքով սահմանված կարգով ու ժամկետում իրացնել դատական պաշտպանության սահմանադրական իր իրավունքը՝ ընդհանուր իրավասության դատարանի միջոցով[7],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ հայցվորի կողմից չի ներկայացվել աշխատանքային վեճ, որը հնարավոր կլիներ քննել ընդհանուր իրավասության դատարանում, այլ հայցվորը վիճարկում է նախարարի՝ նախարարի մեկ այլ հրամանն անվավեր ճանաչելու հրամանը և այդ հրամանը վարչական կարգով

---

[6] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

բողոքարկելու արդյունքում կայացված նախարարի որոշումը: Հետևաբար, դրանցից բխող պետական մարմնի կողմից գործողությունների կամ անգործության իրավաչափությունը որոշելը, վիճարկումը, պարտավորեցումը, գործողության կատարումը կամ ձեռնպահ մնալը, պետք է քննվեն վարչական դատավարության կարգով, որպիսի պայմաններում սույն հայցը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով[8]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ սույն գործով վեճի առարկա հրամանով անվավեր է ճանաչվել Բորիս Էմինյանին աշխատանքում վերականգնելու մասին ՀՀ մշակույթի նախարարի՝ 2019 թվականի մայիսի 31-ի թիվ 276-Ա հրամանը, որի հետևանքով վերջինս ազատվել է իր զբաղեցրած՝ բալետային խմբի վարիչի պաշտոնից: Հետևաբար, անդրադառնալով վիճարկվող ակտի՝ հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու հարցին, հարկ է նախ գնահատման առարկա դարձնել այն հանգամանքը, թե արդյո՞ք ՀՀ մշակույթի նախարարի՝ 2019 թվականի մայիսի 31-ի թիվ 276-Ա հրամանը, որն անվավեր է ճանաչվել վիճարկվող հրամանով, հանդիսանում է վարչական ակտ, և արդյո՞ք այն անվավեր ճանաչելուն ուղղված գործողությունները կարող են դիտարկվել որպես վարչարարություն, թե՝ ոչ:

Այսպես, ՀՀ մշակույթի նախարարի՝ 2019 թվականի մայիսի 31-ի թիվ 276-Ա հրամանի ուսումնասիրությունից հետևում է, որ այն չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ առկա չեն վարչական ակտին բնորոշ բոլոր հատկանիշները: Մասնավորապես, այն չի ընդունվել հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ հարցի կարգավորման նպատակով, քանի որ այդ հրամանով անվավեր է ճանաչվել «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 560-Ա հրամանը՝ Բորիս Էմինյանին աշխատանքից ազատելու մասին, արդյունքում՝ վերջինս վերականգնվել է իր նախկին աշխատանքում,

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

այսինքն՝ դրանով կարգավորվել են Բորիս Էմինյանի՝ որպես բալետի խմբի վարիչի և «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև առկա աշխատանքային հարաբերությունները:

Ընդ որում, տվյալ իրավահարաբերություններում ՀՀ մշակույթի նախարարը հանդես է եկել ոչ թե որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, որը գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում իրացնում է հանրային իրավունքի նորմերով իրեն վերապահված լիազորությունները, այլ որպես «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը վերահսկող լիազորված պետական մարմին, ուստի վերջինիս հրամանն ուղղված է եղել մասնավոր աշխատանքային իրավահարաբերություններում կոնկրետ հարցի կարգավորմանը:

Վերոգրյալի արդյունքում կարելի է եզրակացնել, որ մասնավոր իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված նշված հրամանն անվավեր ճանաչելու գործընթացը չի կարող դիտակվել որպես վարչական մարմնի կողմից իրականացվող վարչարարություն, իսկ դրա արդյունքում ընդունված ակտը՝ վարչական ակտ, որն ուղղված կլինի հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորմանը:

Հատկանշական է, որ չնայած տվյալ իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը, սակայն իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը: Մասնավորապես, սույն գործով կողմերի միջև առաջացած իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված չէ հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), քանի որ այդ հրամանով նախարարի կողմից իրեն վերապահված վերահսկողական լիազորության իրացման

արդյունքում լուծվել է Բորիս Էմինյանի՝ որպես պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողի՝ աշխատանքից ազատման հարցը: Հետևաբար, սույն գործով վիճարկվող ակտով դրա հասցեատերերի մոտ չեն ծագել հանրային իրավական հարաբերություններ:

Վերոգրյալի հիման վրա՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ինչպես նաև ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը, իսկ բալետային խմբի վարիչը չի համարվում հանրային պաշտոն զբաղեցնող անձ կամ հանրային ծառայող, քանի որ վերջինիս զբաղեցրած պաշտոնն ընդգրկված չէ հանրային ծառայության, մասնավորապես՝ պետական ու համայնքային ծառայության, ինչպես նաև հանրային պաշտոնների կամ այլընտրանքային ծառայության պաշտոնների ցանկում, ուստի վերջինիս այդ պաշտոնից ազատելու կապակցությամբ ծագող վեճը դուրս է հանրային իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներից և վերաբերում է մասնավոր աշխատանքային հարաբերությունների կարգավորմանը:

13. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/8970/05/23 գործն ըստ հայցի՝ Բորիս Էմինյանի ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2019 թվականի օգոստոսի 27-ի թիվ 489-Ա հրամանը, 2023 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ Վ-01/23 որոշումը՝ Հայցվորի վարչական բողոքը մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Բորիս Էմինյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/8970/05/23 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻՆՔ

թիվ ՎԴ/8970/05/23 գործն ըստ հայցի՝ Բորիս Էմինյանի ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2019 թվականի օգոստոսի 27-ի թիվ 489-Ա հրամանը, 2023 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ Վ-01/23 որոշումը՝ Հայցվորի վարչական բողոքը մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ**	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**